ՆՈՐ-ԴԱՐ

№ 9 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Չորեքշաբթի 27 Յունվարի 1888 Չորեքշաբթի 27 Յունվարի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 9

Տարեկան 10 ռուբլի, վեց ամսեայ՝ 6 ռուբլի, երեք ամսեայ՝ 3 ռ. 50 կ., ամսեայ՝ 1 ռ. 50 կ., հատասի՝ 5 կոպեկ։ Բաժանորդ գրվում են Թիֆլիսում՝ մինչև խմբագրատունը։

Խմբագրությունն հասցեն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տոն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարությունները ընդունվում են ամեն լեզուներով։ Յայտարարությունների բաւին 2 կ., բեկլամների համար կրկնապատիկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹ

Թիֆլիսում

ՆԵՐԿԱՅ 1888 ԹՈՒԱԿԱՆԻՆ

(Հինգերորդ տարի)

Հրապարակվում է նոյն դիրքով և ծրագրով

Խմբագրությունը ստանում է և սեպհական հեռագիրներ

Տարեկան գինն է 10 ռուբլի, վեց ամսուան՝ 6 ռուբլի, հատով՝ 5 կոպ.

Եւրոպայի, Թուրքիայի, Ամերիկայի և այլ հեռաւոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան 30 ֆրանկ։

Բաժանորդ են գրվում իւրաքանչիւր ամսի 1-ից միայն։

Թիֆլիսում բաժանորդ են գրվում Գ. «Նոր-Դար»-ի խմբագրատանը։

Խմբագրատունը գտնվում է Դօլգովինսկի Պրոսպեկտի վերայ, Թիֆլիսի ժողովարանին (կլուբին) կից՝ Զուբալովի տանը։

Օտար քաղաքներից դիմում են խմբագրությունն՝ Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor-Dar».

Խմբագիր-հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Գաղթելու հարկը հայերի մէջ։
Քրոնիկան.—Լաւեր։ Մի փոքրիկ դիտողութիւն։
Թղթակցութիւններ.—Հին-Նախիջևան։ Նամակ Թիւրքիայից.—Երզրում։
Քաղաքական.—Լուրեր։
Խառն.—Լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրներ։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 26 յունվարի 1888

ԳԱՂԹԵԼՈՒ ՀԱԿՈՒՄԸ ՀԱՅԵՐԻ ՄԷՋ

«Նոր-Դար»-ը շատ յօդուածներ և թղթակցութիւններ է հրատարակել, որոնց բովանդակութիւնը ամբողջապէս թէ մասամբ վերաբերել է հայերի օտար և հեռաւոր երկիրներ գաղթելու սովորութեան և դրանից առաջացած չարիքներին։

Մեր հրապարակախօսական գործունէութեան սկզբումն իսկ, գաղթականութիւնը ազգութեան գերեզմանն ենք ճանաչել։

Շատ տարիների փորձը և հետզհետէ հաւաքած տեղեկութիւնները a posteriori ապացուցանում են մեզ այն, ինչ որ մենք a priori ասել էինք։

Մի ժողովուրդ, իբրև ազգ, իբրև քաղաքական ուրոյն մարմին չի կարող իւր զօրութիւնը, իւր առանձնութիւնները պահպանել և առաջանալ, եթէ իւր ոտքի տակ գետին չունի, չունի մի հայրենիք, որի մէջ նա խիտ խմբուած բնակվում, իւր կեանքով ապրում է։

Ցաւմարիտ է, մեր եկեղեցին այսօր մեր ազգութեան ամենագօրաւոր նեցուկը, պահապանն է, բայց հայրենի հողից հեռացող և հեռաւոր երկիրներում գաղթականութիւն հաստատող հայերը իրաւունք չունին հաւատալու, որ այդ երկրներում էլ նրանք իրենց ազգութիւնը յաւիտեան պահպանած կը լինին՝ հայ-եկեղեցի կանգնեցնելով միայն։ Այդ սխալ է և ինքնախաբութիւն։ Ցաւմարիտ է, եկեղեցին պահպանում է և հովանաւորում է գաղթական ժողովուրդին, մինչև որ սա հոգով և մտքով սերտ կապուած է իւր եկեղեցու հետ և նրան ապաւինում է, բայց օտար կեանքը հեռացնում է, օտարացնում է գաղթական ժողովուրդին իւր եկեղեցուց և այդ կեանքի ալիքների մէջ կուլ է գնում գաղթական ժողովուրդը իւր եկեղեցիով։ Եւ այն խաչը, որ պէտք է փայլէր կապուտակ երկնքի տակ եկեղեցու բարձր գմբէթի վերայ, ճանապարհորդը հազիւ թէ նկատում է անտէր թողած գերեզմանատան մի քարի վերայ, օդից և ժամանակից մաշուած, անդոյն...

Հայերը գաղթել են շատ անգամ իրենց հայրենիքից քաղաքական և այլ ստիպողական հանգամանքներից։ Բայց այսօր էլ տեսնում ենք, որ հայերը գաղթում են օտար երկիրներ ամենայն պատրաստակամութեամբ, թէպէտև ստիպողական հանգամանքներ չկան։

Քանի որ Ռուսիան չէր տիրապետել Անդրկասպեան երկրներին, ռուսական զօրքերը չէին արշաւել դէպի Թիւրքմէն, դէպի Մերվ և Բուխարիա, նոյն հայերը, որոնք այսօր Անդրկասպեան երկրներում իրենց բաղդն են որոնում, կարողանում էին ապրել իրենց հայրենիքում, հայրենի կուռի տակ։

Գաղթելու շարժառիթը տընտեսական-նիւթական ապահովութեան խնդիրն է. մարդիկ ապրել են ուզում, բայց ապրելու միջոց չունին։ Ահա դրա համար է, որ ձգում են հայրենիք և հարազատները և գաղթում Անդրկասպեան երկրները, որպէս զի իրենց ապրուստը հոգան և իրենց ընտանիքը ապրեցնեն։ Բայց միթէ այդպէս է, միթէ այդ գաղթող հայերը իրենց հայրենի երկրում իրենց ապրուստը հոգալ չեն կարող, աշխատանքով չեն կարող ապրելու միջոցներ ձեռք բերել։ Կարծում ենք և հաւատացած ենք, որ կարող են, քանի որ մեր երկրի մեծութիւնը և բնական հարստութիւնը ազգաբնակութեան թուի հետ համեմատած, մեր երկիրը կարող է պահել և սնուցանել աւելի մեծ թուով ժողովուրդ։ Ուրեմն ինչու են գաղթում։ Գաղթելու բուն շարժառիթն այն է, որ կարծում են, թէ կարճ ժամանակում աւելի դիւրին միջոցով մի յայտնի գումարի տէր կը դառնան։ Դրացին գաղթել է և ունեցել է աջողութիւն, այդ օրինակը վարակիչ է, ամենքն էլ հետևում են այդ օրինակին։

Գաղթողը անշուշտ բարի դիտաւորութիւններ ունի և դեղեցիկ երազներ է տեսնում. նա մտածում է, որ շուտով կը հարստանայ և «մարդ դարձած» կը վերադառնայ տուն, իւր սիրելիների մօտ, ինքը բաղդաւոր, նրանց էլ կը բաղդաւորացնէ։

Բայց գեղեցիկ երազները չեն կատարվում, այլ դառն իրականութեան մէջ ցնցվում անհետանում են։

Պանդխտութեան մէջ թափառելով հայը Անդրկասպեան երկրներում կրում է անտանելի նեղութիւններ, մինչև որ մի քանի կոպեկ փող է աշխատում, այսօր վաղը ասելով չէ վերադառնում հայրենիք, այլ սկսում է տուն շինել, խանութներ շինել և իւր կարճամտութեամբ կարծում է, որ եղած գրութիւնը յաւիտեան անփոփոխ կը մնայ։ Սպասում է, որ իւր շինած տնից, իւր բացած խանութից օգուտ պիտի տեսնի... գործը տեղափոխվում է և խանութները կորցնում են իրենց նշանակութիւնը։ Ի՞նչ անէ պանդուխտ հայը, փոխանակ վերադառնալու հայրենիք, աւելի հեռու է գնում՝ աւելի նեղութիւններ կրելու համար։

Մի երկու մարդ մի քանի կոպէկի տէր են դառնում, բայց հարիւրաւոր մարդիկ իրենց ընտանիքներով թշուառանում են... բայի տնտեսական անկումից՝ բարոյապէս ընկնում է գաղթական ժողովուրդը և ազգութեան համար էլ կորչում է նա։

Անդրկասպեան երկրի հայ գաղթականութեան մէջ միտք է ծագել վերադառնալ հայրենիք և ընկերական պայմանների վերայ հիմնած, պարապել հողի մշակութեամբ։

Դրանից էլ լաւ, օգտաւէտ և միանգամայն ազնիւ միտք կարող չէ լինել։ Ցաւմարիտ է, հողագործութիւնից կարելի՞ չէ շատ և այնպէս գիւրութեամբ հարստանալ, ինչպէս առևտուրից, բայց և հողագործը ազատ է մնում առևտուրի հետ կապուած բոլոր ձախորդութիւններից և անպատեհութիւններից և որ գլխաւորն է, իրրև հողատէր մարդ շատ թէ քիչ նրա ապրուստը աւելի ապահովուած է։

Գաղթականութիւնից ոչինչ օգուտ չկայ հային, բայց գալիք չարիքը անխուսափելի է։ Դրա համար էլ, Թրքահայաստանի հայերը ինչ նեղութեան մէջ էլ որ լինեն, չպէտք է ձգեն արօրը, չպէտք է թողնեն հայրենի երկիրը և գաղթեն, որովհետև օտար երկրում իրենց լաւ բան չէ սպասում։

Հրէաները թողին իրենց երկիրը և գաղթելով կամեցան—աւեւտաց երկիրը ձեռք բերել, բայց մինչև օրս էլ թափառում են աշխարհէ աշխարհ և չեն գտնում ոչ թէ աւետեաց երկիրը, այլ մի քարքարոտ գետին, որ կարողանան իրենցը համարել և հանգստանալ. ամեն տեղ օտար, ամենից հալածուած...

Ոչ թէ աւելի հեռանալ է հարկաւոր հայերին իրենց հայրենի երկրից, այլ—վերադառնալ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Խմբագրությունս խնդրում է, որ անցեալից ով որ իրեն մի որևէ դատաստան պարտ, բարեհաճէ ուղարկելու։ Կարիւի չէ պահանջել խմբագրությունից, որ նա ծախսէ ու սպասէ և վերջն էլ իրեն հասանելիքը զլանան հատուցանելու։

—

Յունվարի 16-ին, Մոսկվայում կայացել է բնագիտութեան, մարդաբանութեան և ցեղաբանութեան սիրողների Կայսերական ճիւղի ժողովը, ուր կարդացել է մի զեկուցում «Կովկասեան թաթ ազգի մասին», և Տկեչելովի զեկուցումը «Կովկասեան անպատացող մի ազգի – ուտիացիների մասին»։ Երկրորդ զեկուցումի մէջ փորձել են նկարագրել ուտիացիներին. նրանց մասին ասուած է, որ հին, լեռնաբնակ ժողովուրդ է և նրա մասին լիշում են Պարսքանն ու Պլինիոսը, բայց նրա պատմութիւնը խիտ մութն է։ Ներկայումս ուտիացիներից մնացել է միայն 1,000 տուն, որոնք գետնափոր են նստում Ելիսավետպոլի նահանգի, հսկայական լեռների թաւանտառներում։ Արդէն ԺԹ դարում ուտիացիները քրիստոնեայ էին, բայց կամաց-կամաց բնական հալոց թագաւորների իշխանութեան տակ և ընդունեցին նրանց կրօնը, կորցրին իրենց ինքնուրոյնութիւնն, իրենց լեզուն և խիստ փոփոխեցին իրենց սովորութիւններն ու բարքերը։

Որքան մեզ լաւանի է, ուտիացիները այժմ կազմում են հինգ գիւղերի բնակիչ։ Նրանք կրօնով բաժանվում են երկու մասի, մինը հաւատաւոր, իսկ միւսը՝ լուսնադաւան։ Հաւատաւորները պահպանել են իրենց լեզուն, սովորութիւններն ու բարքը՝ որովհետև հայոց եկեղեցին երբէք չէ ձգտել ժողովրդի ինքնուրոյնութիւնները ոչնչացնելու. իսկ լուսնադաւանները խօսում են մասամբ վրացերէն և մասամբ էլ թուրքերէն։ Հաւատաւոր ուտիացիների մէջ երևում է գովելի ձգտում դէպի ուսումն և գիտութիւն և հիմնած ունին ուսումնարաններ թէ աղջկերանց և թէ տղաների համար։

—

ԴՀԼ-ԱՐՎԱԴԻՑ.—Աչտեղի վանականութեան անկման մասին այնքան խօսուեց, որ, գուցէ ձանձրալի էլ դարձաւ. բայց ինչ անես, որ դա մեր կեանքի և մահու խնդիրն է և այդ մասին լռել կարելի չէ, մանաւանդ որ, հեռաւոր հաւերը, կարծելով թէ Անդրկասպեան երկիրներում ոսկի է փռած՝ հաւատող չկայ, անդադար դիմում են այս կողմերը և առևտրի ընկած գրութիւնն աւելի դարձնելու համար։ Ցաւմարիտ է, մի քանի ժամանակ առաջ, ինչպէս Անդրկասպեան միւս կողմերը, նոյնպէս և մեր Դհլ-Արվադը առևտրի աջող դրութեամբ չահեցնում և մխիթարում էր տեղիս թէ հայ և թէ այլ ազգերի վաճառականներին, բայց այսօր մեր Դհլ-Արվադի առևտուրն, ինչպէս միւս տեղերում, ընկած է, թէև եկաւ առևտրի համար տարուայ լաւ եղանակը, բայց ոչինչ նշանակութիւն չունեցաւ. քիչ ժամանակից փոքր տաքերը կընկնեն և դեռ ձմեռուայ ապրանք հարցնող չկայ։ Առևտրի ընկնելու պատճառը, մեր կարծիքով, այն է, որ նախ՝ ըստ Տմբլաչի Խաչանի, դերձակ ու քարտաշ չմնացին, բոլորն էլ թողնելով իրենց արհեստը, առևտրով սկսան պարապել և երկրորդ՝ սպաներն, արհեստաւորները, զանազան բանւորներն և ծառայողներն առաջուանից անհամեմատ քիչ ռոճիկ են ստանում, ուստի և առաջուայ պէս չտալ ծախս չեն անում. ինչպէս առևտրի խիստ աջողութիւնը, նոյնպէս և այժմու խիստ անկումն, ի հարկէ, առաջանում է իրերի անբնական դրութիւնից. սակայն կանցնի բաւական ժամանակ, ամեն մարդ կ'սկսի իւր գործով պարապել, հրապարակում կը մնան միայն այնքան մարդիկ, որոնք կը բաւականացնեն եղած պահանջը, այսինքն, առաջարկութիւնը կը համապատասխանէ պահանջին, և այն ժամանակ միայն իրերը կ'ստանան իրենց կանոնաւոր ընթացքը։ Բայց մինչև այդ հաւատարակչռութեան հասնելը՝ շատերը պիտի վնասուին, թոյլերը պիտի ընկնին տեղի տալով աւելի զօրաւորներին։ Այս անխուսափելի է։

—

Անցեալները Թիֆլիսի հաչտարար դատարաններից մինում քննվում էր ստ. Ֆրանցօվսկի և Շապինօվսկի գործը, որոնցից առաջինը գանգատվում էր վերջինիս իրեն հասցրած բանաւոր վիրաւորանքների դէմ։ Հաչտարար դատաւորը քննելով գործը, միզադրատղին

ZURICH 80 ZÜRCHERGASSE

դատապարտել էր 100 ր. տուգանքի։ Բայց երկու կողմն էլ դժգոհ լինելով այդ վճռից, բողոքարկու դատ ներկայացրին Թիֆլիսի նահանգական դատարանին, որ քննելով գործը, հաշտարար դատաւորի վճիռը՝ 100 ր. տուգանք, փոխեց 10 օրուայ բանտարկութեան։ Դատարանի վճիռը կարդացուելուց յետոյ, ինչպէս լսել է տեղական ռուս թերթերից մինը, տ. Ֆրանցօվան համաձայնել է հաշտուելու այն պայմանով, որ տ. Շաղինօվան Զէյթունցեանների օգտին վճարէ 5,000 րուբլի։

—

ԿՐՈՒԽ գիւղից (Գօրու մօտ) մեզ գրում են.—Անցեալ օրերը մանաւոր խոստովանութեան միջոցին զարթեցաւ մի բաւական հին խնդիր, որ արժանի է ուշադրութեան։ Բանը նրանումն է, որ հանգուցեալ Գաւիթ քահանայ Գուլեանը, որ հովւում էր Գիրր առած գիւղը, տասներկու տարի առաջ խոստովանելով և հաղորդուելով Գօրու Ն. ք. Տ.—Սահ. յի ձեռքով, Մ. ք. Տ.—Մ.-ի և Ա. ք. Ց.-ի ներկայութեամբ, կտակում է 2000 րուբլի յօգուտ ս. էջմիածնի Աթոռին՝ պատուիրելով միանգամայն իւր որդուն, որ իւր մահուանից յետոյ, պարտամուրհակներով գրուած գումարներն հաւաքէ և 2000 րուբլին յանձնէ Աթոռին։ Բայց որովհետև կտակը բանաւոր էր և օրինաւոր ձև չունէր, այլ նահապետական ձևով էր կատարուել, ուստի կտակակատարը հաւաքում է փողերը Գիրր գիւղից և տեղափոխւում է Ռեփլիզերիեւէ գիւղը, որ Գօրու մօտ է։ Յիշեալ փողով նա կառուցանում է եւրոպական տներ, որոնցից ամէն տարեկան վարձ ստանում է 400 րուբլի։ Չնայելով, որ հանգուցեալը 6000 րուբլի կարողութիւնից աւելի է թողել իւր որդուն՝ Ց. քհ. Գուլեանցին, բայց, ինչպէս լսում [illegible] մնում են դեռ իւր մօտ։

—

Գեղարուեստի օժանդակող կովկասեան ընկերութեան ցուցահանդէսը, ինչպէս իւր ժամանակին յայտնեցինք, բացուեց յունվարի 21-ին։ Ինչպէս երևում է, ցուցահանդէսը բաւական հետաքրքրել է հասարակութեան, որովհետև այցելուների թիւը քանի գնում աւելանում է։ Ճշմարիտ է, ցուցահանդէսի բացման առաջին օրը բաւական քիչ այցելուներ կային, ընդամենը մօտ 100 հոգի էին, բայց և մուտքի համար վճարն էլ բաւական մեծ էր. իսկ երկրորդ օրը, մուտքի գինը պակասեցնելով, այցելուների թիւը կրկնապատկուեց, իսկ կիւրակի հասել է մօտ 1000 հոգու։

—

ԲԱԳՈՒԻՑ.—Ոչ մեր մէջ մանում է եւրոպական կեղծ լուսաւորութիւնը և դրա հետ էլ լուսաւորութեան մասին կեղծ գաղափարներ, դրա համար մի փոքրիկ ապացոյց է հետևեալ դէպքը, որ մինն է իւր նման հազարներից։ Նշանադրութիւնն յայտնի է, թէ ինչպէս է կատարւում մեր մէջ։ Անցեալ օրեր մի երիտասարդի կողմից չորս մարդ, իրենց հետ առած փեսացուին և մի մատանի, առանց քահանայի գնում են աղջկայ տուն, որտեղ լինում են և աղջկայ կողմից նոյնպէս չորս հոգի։ Ըստ սովորականին, խօսք են բաց անում և մտադիր են լինում այդ առթիւ մատանին, ինչպէս կասեն, մի վեալլիկայ տալ, իսկ յետոյ մի քանի օրից զկնի, մեծ նշանը բերել։ Բայց, չնայելով, որ առաջուց էլ այդ առթիւ սակարկութիւններ եղած վերջացած էին, աղջկայ մայրը տեսնելով, որ փեսացուի հագին արխալուղ և չուխայ է, չէ համաձայնվում նրան իւր աղջիկը տալու և բանը լուծվում է, որովհետև փեսան հագած չէ եղել ժիլէթ, սիւրտուկ, ցիլինդր և ձեռին էլ չէ ունեցել տրոստ... Աղջկայ մօր կարծիքով, չուխան և արխալուղը ազխատութեան, անշնորհութեան և խելքի պակասութեան նշան է, մինչդեռ նոյնօրինակ չուխաներ հագնողներն, անշուշտ զուրկ չեն լինիլ ուսումից, խելքից... Զարմանալի կերպով փոխւում են ժամանակները. քանի ժամանակ առաջ էր, որ այդ բոլորը մի օտարոտի և խորթ բաներ էին համարւում. կարծես ժամանակը, փորձը ոչինչ նշանակութիւն չեն ունեցել...

—

Պետական կալուածների մինիստրը որոշել է այս տարի արծաթա-արճճային հանքերում աշխատութիւններն աւելացնել, գլխաւորապէս արճճի քանակութիւնն աւելացնելու նպատակով։ Բանը նրանումն է, որ արճճի քանակութիւնը քանի գնում, նուազում է և որին այնքան մեծ կարիք կայ Ռուսիայում պատրաստող-գործարաններում. բոլոր արճիճը, բացի Թուրքեստանից, հանում են, ինչպէս ասած, կողմնակի կերպով արծաթ-արճճային հանքերը մշակելու միջոցին Ալտայի շրջանում։ Բացի այդ, արճիճ գտում են Ներչինսկեան շրջանում, Կիրգիզեան տափաստանում և Կովկասում՝ Թերեքի շրջանում։ Հանքերում աշխատութիւններն աւելացնելուց զատ, մտադրութիւն կայ նորանոր հանքեր էլ պարզելու։ Բացի այդ, պետական կալուածների մինիստրութիւնը մտադիր է քաջալերելու մինչև այժմ անմշակ մնացող կամ քիչ մշակուող արճճի հանքերը։

—

ԳԱԶԱԽԻՑ.—Գազախի գաւառի Նորընափ հայ գիւղացիներին հիւրասիրելու մտքից մեզ հանգանակուեցաւ մօտաւորապէս 120 րուբլի և յանձնուեցաւ ղազախեցի մի երիտասարդ պարոնի, որպէս զի նա մի քանի մարդկանց աջակցութեամբ հարկաւոր եղած ծախսերն անէ։ [illegible] համար ծախս եղել է 80 ր., իսկ մնացեալ 40 րուբլին որոշուել է յանձնել տեղիս Նորաշէնայ եկեղեցու օգտին. Չնայելով, որ այդ մասին յայտնուած է յիշեալ երիտասարդին, բայց մինչև օրս դեռ այդ պարոնը, ինչպէս լսում ենք, 40 րուբլին պահել է իւր մօտ։ Կարծում ենք, որ հարկաւոր էր այդ փողերը, քանի կարելի է շուտով յանձնել եկեղեցուն՝ որովհետև նա կարիք ունի։

—

Կովկասում արդէն մի քանի փորձեր եղան խցանի (пробка) ծառեր աճեցնելու։ «Нов.»-ին հաղորդում են, որ այս տարուայ գարնանը պիտի պարզուի այդ գործերի հետևանքը։ Այդ ծառը հասցնելու փորձեր անում է գիւղական պարտիզպան Շարիրը։ Այդ ծառի համար սերմը բերուած է Ղրիմի Նիկիտեան պարտիզից։

—

Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրի անցած տեղեկութիւններից երևում է, որ ամբողջ Ռուսիայում երկաթուղիների գծի տարածութիւնը, չհաշուելով Անդրկասպեան երկրի երկաթուղին, հասնում է 26,568 վերստի։

—

Թիֆլիսի նահանգական դատարանը իւր վերջին մի քանի նիստերում քննում էր մեր ընթերցողներին յայտնի Զօփուրի եղբայրներից անունով յայտնի աւազակների գործը։ Ինչպէս յայտնի է, Զօփուրի եղբայրներից և նրանց ընկերներից մի քանիսը սպանուեցան։ Թիֆլիսի նահանգական դատարանը իւր վերջին, յունվարի 24-ին կայացրած նիստում հետևեալ եզրակացութիւնն կայացրեց.—յանցաւոր ճանաչել Բարմաղ Զօփուրին՝ 19 տարեկան, Գալուստ և Սարգիս Թելէթօվներին և Վանօ Մնացականօվին, որոնցից Ա. Զօփուրի դատն մեղադրվում է ա. 1885 թ. սեպտեմբերի 15-ին քաղաքային բանտից, զօրով իւր եղբօր Սարգսին ազատելուն համար, բ. Պօղոսօմօվին ծեծելուն մասնակից լինելուն համար, որից Պօղոսօմօվը մեռել է. գ. ոստի միջոցով Շուշալովների բանտից փախչելուն համար. դ. Կօծինեանի խանութից ապրանք գողանալուն համար, ե. 1885 թ. դեկտեմբերի 5-ին ճանապարհի վերայ թալանութիւն անելուն, զ. 1886 թ. մարտի 6-ին արած թալանութեան, է. 1886 թ. մարտի 31-ին արած թալանութեան, ը. Բօչալով ստարշինային սպանելուն և գեմաովալին մի պահնորդի ծանր վէրք հասցնելուն, թ. Թովմասօվին նպատակով ոստիկանների հետ սպանելուն, ժ. ոստիկանների հետ Մելքօնովի տունը թալանելու և այդ միջոցին Մելքօնովին սպանելուն, ժա. 1886 թ. մայիսի 23-ին արած թալանութեան, ժբ. նոյն թուի յունվարի 13-ի թալանութեան համար։ Բ. Գալուստ և Սարգիս Թելէթօվներ և Վանօ Մնացականօվը մեղադրվում են 1886 թ. ապրիլի 16-ից Զօփուրի եղբայրներից համար պատսպարան պահելու համար։ Այդ յանցանքների համար դատարանը վճռեց՝—Բարմաղ Զօփուրին 13 տարուայ և 4 ամսուայ աքսորի տաժանակիր աշխատանքով, Մնացականօվին, բանտարկել երեք և կէս տարի. Սարգիս և Գալուստ Թելէթօվներին բանտարկել երկու և կէս տարի։ Բոլոր միւս դատուողները անպարտ են հրատարակուած դատաստանով, իսկ յանցաւոր ճանաչուածները պահապանների հսկողութեան են ենթարկուած։

—

ՆԻԺԻՑ մեզ գրում են.—Ռուսէախօս Նիժ գիւղում չորս եկեղեցի կայ, որից մինն է ս. Աստուածածնայ անուան եկեղեցին, որ 250 տան ժողովուրդ ունի, երկու քահանայ և մօտ 60 էլ տիրացու, որոնց շատութիւնից եկեղեցում շատ անգամ անկարգութիւններ են պատահում։ Յայս անինք, որ կայ [illegible] քահանաները նրանցից ընտրել արժանաւորներին, որպէս զի վերջ տրուի անկարգութիւններին։

—Վկայում է, որ «կարմրուկ» կոչուած հիւանդութիւնը մեծ քանակութեամբ զոհեր է տանում մեր գիւղի մանուկներից. օր չէ անցնում, որ նրանցից չորս կամ հինգը չզոհուին այդ ցաւին։

—

Նովօրօսիյսկի (Օդեսսայի) համալսարանը, ինչպէս հաղորդում է «Одес. Вѣст.»-ը, առանձին կարգադրութեամբ փակուած է անորոշ ժամանակով։ Ներկայումս ուսանողներին արձակման թղթեր են տալիս՝ մինչև համալսարանի բացումը, որի մասին յայտարարութիւնը պիտի տպուի լրագիրներում։ Շատ ուսանողներ, որոնք վերադարձել էին Օդեսսա, կրկին արձակուրդ ստանալով՝ վերադառնում են տուն։

—

Վարշաւայի նահանգի Վլօցլավսկ քաղաքի հրէաները, վերջին պետական կարգադրութեան վերայ, որով այն 1888 թուին առևտուր անելու համար պատենտներ առնելու դժուարութիւններ են հանած հրէաների համար, «Slowo» թերթի ասելով, թողնում են իրենց ձեռնարկութիւնները և գաղթում են արտասահման և կամ թէ քրիստոնէութիւն են ընդունում։ Քրիստոնէութիւն ընդունողներից ոմանք դիմում են բողոքականութեան և ոմանք կաթոլիկութեան գիրկը։

ՄԻ ՓՈՔՐԻԿ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

—

Մեր հասարակական կեանքը այնքան առատ է անմխիթար երևոյթներով, որ շատ անգամ մարդու յոյսը փշրվում, ի դերև են ելանում։ Ով մօտ կանգնած է այդ կեանքին, ով որ աչքի առջև գիտել է նրա կողմը, անշուշտ նրա մէջ նկատել է վիրաւոր տեղեր, խոցեր, որոնք գլխաւորապէս գոյացել ու զարգանում են «տանու մարդու» ձեռքով։

Ցաւը այն ժամանակն է բանդվում, երբ թշնամին տանից է. այդ անողորմ մի ճշմարտութիւն է, որի դէմ ոչինչ չէ կարելի անել։ Ի՞նչ կարող է անել թշնամին, երբ ընտանիքի անդամները գիտեն սիրով վարուել, խաղաղութեամբ իրենց ցաւը դարմանել, երբ նրանք բոլորովին նուիրուած են այդ հիմնարկութեան՝ ընտանիքը ամբողջ պահելու սուրբ գաղափարին։ Կրկնում եմ, մեր կեանքի մէջ պատահող անմխիթար երևոյթների պատճառը դոյն այդ կեանքի միջից է, և ոչ այլ տեղից։

Կար ժամանակ, երբ մեր լուացքը մեր բակումն էինք լուանում ու չորացնում, բայց այժմ quasi լուսաւորութեան անունով կամ չարանախանձ կրկից գրգռուած պարտք է համարւում այդ լուացքը նախ ցոյց տալ աշխարհին։ Դրանից յետոյ թէկուզ ջրհեղեղ լինի։ Չգիտեմ ինչ կարծիքի է ընթերցողը, բայց ես այդ կատարեալ խաւարամտութիւն համարելով անմահ Եղիշէի խօսքը պիտի ասեմ. «այդ ամենայն չարիք մտանեն ի սիրտս մարդոյ չանուամութեանն»։

Մեր աչքի առաջ մեծանում է մի սերունդ, որ համարեա քաղաքակրթութեան պէս անհաս է, մուայլում է, որ չէ փչում երէկը։ Եկան, փոխուեցան նոր ժամանակներ, առանց ընդարութեան մեր հասարակական կեանքի մէջը մածեցին բոլորը, ինչ որ նոր է, թէև անպէտք, ոտի տակ առին ինչ որ կար և դրա համար հին էր համարւում, բայց անհրաժեշտ էր, կարևոր էր։ Այդ բանի հետևանքն այն եղաւ, որ օրէ օր շատանում, բազմապատկվում է մեր կեանքում... ցաւալի անմխիթար երևոյթների թիւը։

Նոր սերունդը իւր բարոյական չինութիւնը ուզում է կառուցանել աւազի վերայ, որ այնքան հիմնաւոր կը լինի, որքան կառուցանողների բարոյական համոզմունքը։ Հազարից մի օրինակ։ Տարիներով կարելի է մեռելները այրելու խնդիրը առաջնորդողներով արծարծել ի զուր տեղը և՝ յանկարծ հազարամեայ մի երկու գերեզմանաքար տեղից շարժելու պատճառով, գծուծ նպատակով, ահաթեմաներ կարդալ։ Այսօր կարելի է «աղանդներ տարածեցէք հայերի մէջ» ասել, վաղը հայ եկեղեցու ամենայապաւ ձեռնամուխ...

Մենք չենք ուսումնասիրում մեր անցեալը։ Ահա այժմեան սերնդի մի խոշոր պակասութիւնը, որ աչքի է ընկնում իւրաքանչիւր քայլափոխում։ Մեր մէջ հասարակական գործին գլուխ, ընդհանուրի մաքին առաջնորդ են կանգնում մեծ մասամբ մարդիկ, որոնք չգիտեն այն տառաճանները, որոնցով առաջ է գնացել այդ հասարակութեան կեանքը։

Անցեալի անգիտութիւնից մեր մէջ շատ աղանդական խնդիրներ են յղանում, այլ և շատ քնքոյշ հարցեր այլասերում կերպարանք առնում. Մինչդեռ պատճառով մենք չենք ճանաչում մեզ, մեր բարեկամն ու թշնամին։ Դրա հետևանքն է, որ մէջներս շատացել է ծաղրող-զառած ու դատափետողների թիւը, իսկ լուրջ քննադատութիւնը այնքան հազուագիւտ երևոյթ է դառել։

Ինքնաճանաչութիւն, ինքնաճանաչութիւն—բառս ընդարձակ մարդ... հա՜ն, եթէ երկինքը այդ առաքինութիւններից մասն ու բաժին հանէր և մեզ, թերևս այն ժամանակ մեր բոլոր վէրքերը ցոյց չտայինք հինգ առաջին պատահողին...

Այս մտքերը պաշարեցին ինձ, ընթերցող, երբ մի ժամ առաջ մի օտար թերթի մէջ կարդացի հետևեալ բովանդակութեամբ Շուշուց հաղորդուած լուրը.—«Շուշու թեմական դպրանոցը վերջին երեք տարիներս անկեալ դրութեան մէջ է։ Ոչ ոք չկայ, որ նրա վիճակը հոգայ։ Հոգաբարձութեան և առաջնորդի մէջ գժտութիւններ են ծագել»։ Արդէօք օտար թերթը սրտացաւ է թէ մի դարման պիտի անէ անկեալ դրութեան։ Արդէօք այսքան օտար դպրոցներ կան, որոնք ունին իրենց վարչութիւնները և իրենց հոգսերը, այդ օտար թերթերը արդեօք մեզ այդպիսի տեղեկութիւններ հաղորդում են։

Ց. Ճաղար.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԻՆ ՆԱԽԻՋԵՒԱՆ, 20 յունվարի.— Այս այն քաղաքներից մէկն է, որ առակուբն իրենից չէ թոթափել հնադարեան և պարսկական փոշին և մինչև այսօր էլ պահելով նրա ճնշող ազդեցութեան նիրհը, անձաւեւ, զրկուած իւր ինքնաճանաչութեան զգայարաններից, մղւում է կատաղի կեանքի հոսանքներից և մօտենում է այդպիսով իւր օրհասականին։ 7—8 տարի բացակայ լինելուց յետոյ և կրկին վերադառնալով հայրենի գիրկը, խոստովանում եմ, որ այդ տարիների ընթացքում առաջադիմութեան հետքն անգամ աչքիս չանցաւ։ Ամեն տեղ էլ ձեր հայեացքը հանդիպում է անցած ժամանակի աւերող ձեռքի հետքերին, մի խօսքով բոլոր ձեր շրջապատողները տխուր երևոյթներ են։ Բնակիչների թիւը օր ըստ օրէ նուազում է, նրանք չունենալով ոչ մի միջոց իրենց օրեկան պարէնը հայթհայթելու, դիմում են Ռուսիայի զանազան քաղաքները՝ թողնելով իրենց ընտանիքն անպաշտպան դրութեան մէջ, կարօտ մինչև անգամ մի կտոր սև հացի։ Նրանց ողորմելի կանայքը ստիպուած են մուրալ կամ դիմել ուրիշ միջոցների, որպէս զի այդպիսով կարողանան պահպանել իրենց թշուառ գոյութիւնը։ Ահա որտեղից է մեր մէջ անբարոյականութիւնը իւր սկիզբն առնում։

Քաղաքում կայ քաղաքային կլուբ, ուր գլխաւորապէս տեղական հասարակութեան անդամները չփվում են միմեանց հետ. մանում ես նրա կարծելով, թէ գուցէ այնտեղ հանդիպես մի քանի մխիթարական երևոյթների։ Բայց ոչ. լուսաւորած սենեակներում կատարեալ գերեզմանական լռութիւն է տիրում։ Նստում ես և այս այն կողմը շուռ տալիս մի քանի լրագրների հին համարները յուսալով, որ շուտով կը հաւաքուին անդամները...

Սակայն գիշերը անցնում է և ոչ ոք չկայ. երկար սպասելուց յետոյ վերջապէս ձանձրանում և դուրս ես գնում։ Այսպէս կրթական գործն էլ մի այնքան մխիթարական երևոյթ չէ ներկայացնում մեզ. բաւական է մի թռուցիկ հայեացք ձգել՝ ամեն բան հասկանալու համար։ Եւ այդ պէտք է վերագրել նրան, որ տեղիս հասարակութիւնը բաւական անտարբեր է դէպի դպրոցները։ Տեղիս հայոց երկսեռ դպրոցը գտնվում է Ս. Գէորգ եկեղեցու գաւիթում, ուր ապակոյ ուսումնարանը տեղաւորուած է մի խարխուլ և կատարեալ անդրջրհեղեղեան շինութեան մէջ։

Ինչպէս մանկավարժական, նոյնպէս և առողջապահական տեսակէտից նայելով, նախիջևանցիները վաղուց պէտք է աշխատած լինէին կամ դպրոցը տեղափոխել մի ուրիշ աւելի յարմար տեղ և կամ վերանորոգել շինութիւնը, որպէս զի այդպիսով ազատած լինեն իրենց զաւակներին այն հազար ու մի վատ հետևանքներից, որոնք առաջանում են խոնաւութիւնից և առհասարակ շինութեան վատութիւնից։ Որովհետև դպրոցի շինութիւնը, պէտք է ասել, անհամեմատ լաւ է. նա չունի այն անյարմարութիւնների և ժամանակ

խմաւուԹիւնը, որ անի տալուց դպրո-ցի չինուԹիւնը։

Ուսուցչաց խումբը բաղկանում է վեց հոգուց, որոնցից երկուսը աւարտել են իրենց ուսման ընԹացքը Ներսիսեան հոգևոր դպրանոցում, իսկ մնացածները ոչ մի տեղ չեն աւարտել, բացի առաջ լեզուի ուսուցչից, որը աւարտել է տեղիս գաւառական ուսումնարանում։ Արդէն բոլորին յայտնի պէտք է լինի այն անհերքելի և այն անուրանալի մանկավարժական ճշմարտուԹիւնը, որ ծեծը դաստիարակուԹեան գործի մէջ մի անպայման վնասակար միջոց է, որից պէտք է խուսափեն այն անձինք, որոնք յանձն են առել դաստիարակուԹեան գործը, սակայն այս մարդիկը, ինչպէս լսում է, այստեղ Թոյլ գործադրուԹիւն ունին։

Դպրոցների հոգաբարձուԹեան խորհուրդ կասկենք մի փոքր չուտ-չուտ յաճախել դպրոց և հսկողուԹիւն ունենալ։

Ա.

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

ԷՐԶՐՈՒՄ, 14 յունվարի.—Թէև ԼուսաւորուԹեան կեդրոններում աւելի մօտ եղող Թիւրքիայի քաղաքներում համար սովորական բաներ են զանազան նուագահանդէսներ, երեկոյԹներ, խնջոյքներ, բայց դոքա արտասովոր բաներ են մեզ՝ Թիւրքահպատակներիս համար, ուստի Թոյլ կը տամ մի փոքր մանրամասնաբար նկարագրելու այն 1888 Թ. յունվարի 7-ին անցուցած Սանասարեան դպրանոցի տուած նուագահանդէսը, որ եղաւ երևոյԹ է մեր կեանքի մէջ և մինչև այժմ չտեսնուած բան, մանաւանդ դա արժանի է նկարագրուԹեան և այն պատճառով, որ նուագահանդէսի կազմողներն աշակերտներ էին։

Սանասարեան վարժարանը սովորուԹիւն ունի Ծննդեան և Զատկի ճրագալոյց երեկոները … հանդէս կատարելու։ Ծննդեան ճրագալոյցին այս հանդէսը չկատարուեցաւ, այլ յետաձգուեցաւ հինգշաբԹի երեկոյեան։ Նիւաւ օրը, ամեն ինչ պատրաստ էր։ Հանդիսի դահլիճը կահաւորուած էր չքեղ, չորս կողմը բազմոցներ շարուած, մէջ տեղը աԹոռները դրած. լապտերների լոյսով կը ծփար հանդիսարանը. ճիշդ դէմուդէմ դրան կախուած էր մեծ բարերարի ձեռներ պատկերը, չորս կողմը կանաչ պսակ, գլխին մի ծիրմակ վարդ։ Արժէր, և հետաքրքիր էր խիստ, պատկը դրած ժամանակին ներկայ լինել, լսել և զգալ այն երախտագիտական զգացմունքն, որ կը Թռչէր այդ խեղճան պատկերի չուրջ բոլորող մասսայ սրտերէն… ԱԹոռների առաջ, ճիշդ մէջ տեղը կը բարձրանար եռատրիճեան մի պատուանդան, որ վրան և չուրջը շարուած էին ծաղկամաններ իրենց ծաղիկներովը և ծառերովը, որը խիստ ախնախոճ միանտարան կը կազմէր։ Այդ կանաչ բլրաձև պարտիզին հոն բեմն էր, որոյ առաջի երկու անկիւնները դրուած էին երկու հատ դաշնակ. իսկ մի կողմը շարուած էին ջուԹակի դրակալները։ Նուագահանդէսի առաջը աշակերտներն էին, հրաւիրեալներն ևս նստած էին զորձող. երեկոյԹը ընտանեկան էր։ Ամեն մի աշակերտ կանչել էր իւր ծնողքը կամ մօտիկ ազգականներն ու բարեկամները, որոնք երեկ. ժամ 6-ին արդէն պատրաստ էին և առանձին ընդունարաններում կ՚սպասէին։ Ենիւ ժամը, դահլիճը մտան նախ կանայք և օրիորդները և բռնեցին իրենց համար նշանակուած տեղը, յաջորդեցին նոցա մարդիկները։ Աշակերտները բեմի վերայ գլխարած, մաննը ձեռքերնին, գեղեցիկ դասաւորուած կանգնած են. ամբողջ բազմուԹիւնը մօտ 180 հոգի սոքի վրայ է, քահանաները տեղի առաջնորդական տեղապահ արժ. ՏիմոԹէոս ծ. վարդապետի հետ միասին բոլորած են կանաչ ամբարտակի չուրջը, կլորակ մի սեղանի վրայ նստա առաջ դրուած է Թէյ, հաց, ջուր և խունկ. բոլորն էլ զգեստաւորուած են։ Հայր սուրբը տասը հոգի դէպ…, իսկ աշակերտները վարժարանիս տեսչուԹեան անդամներէն մեծ. պ. Ս. Սողոկեանի առաջնորդուԹեամբը սկսեցին «Խորհուրդ մեծ»-ը երգել. խորհրդաւոր էր երգը, հրաշալի էր երգուածը։ Աւարտելէն յետոյ հայր սուրբը … րան կարդաց. ձայնը արձագանք կուտար. խաչը ջուր ձգեցին. օրհնեցին տանն ու տանուտէրը և այցելուաց անօրհնէքը վերջացուցին։ Ամեն մարդ իւր տեղը նստեց և վարժարանիս տեսչուԹեան անդամներէն մեծ. Գ. Արսլանեանի առաջնորդուԹեամբը սկսուեց նուագահանդէսը։ Եւրոպական անման երաժիշտներու նուիրական բաղէներու մէջ սրտէն և հոգիէն բղխած ձայներն արձագանք կուտային այդ խեղճան Սանասարեան վարժարանի մէջ, Բարձր Հայոց լեռներու վրայ, և կը յուզէին այն բոլոր սրտերը, որոնք ընդունակ էին զգալու այդ նուագներու ումն ու հոգին։ Աշակերտները կը նուագէին երկու նուագարաններով, այն է՝ ջուԹակ և դաշնակ. երբեմն միահամուռ ջուԹակ կը նուագէր, երբեմն ջուԹակի հետ դաշնակը կը միանար, երբեմն առանձին դաշնակ կածուէր, երկձայն, երբեմն քառաձայն. իսկ երբեմն առանձին ջուԹակն ու դաշնակը կը միանային իրենց մենաձայն երգերու մէջ. կը նուագէին, կը խաղային սրտի Թելերու հետ, կը յուզէին և ծափն ու կրկնուԹեան ձայները կը վերցնէին դահլիճի առաստաղը։ Շատ չանցուցները չընչուորուել էին այդ օրը, որոնց սիրտ կը պակասէր, սիր կը տրուէր, ամենքն էլ ուրախ էին, ամենքն էլ զուարԹ, ամենու ճակատին զարմանքի դրոշմ կերևէր. Թողած երգերու պատուաբաԹիւնը, նուագողներու չարժան ձեռքերու վրայ կը զարմանային։ Նուագահանդէսը երկու մասի էր բաժանուած. առաջին մասը վերջանալէն յետոյ քան րոպէի չափ հանգիստ տրուեցաւ հանդիսականներուն, որոնցմէ մի մասը գնաց և ծխարանում ծխեց, իսկ աշակերտաց՝ որոնք առանձին էին նստել, տեսնուէին իրենց ծնողաց հետ, իսկ միւս կողմէն յատուկ հանդիսի համար նշանակուած ծառայող աշակերտները օչարակ կը մատակարարէին յարգելի հանդիսականներուն։ Այս ամենը վերջանալէն յետոյ սկսուեցաւ երկրորդ մասը. միևնոյն հրացումը, միևնոյն յափշտակուԹիւնը ամեն մի բաղէ ամենուրեք կը տեսնուէր։ Վերջացաւ երկրորդ մասն էլ «Հրեշտակ զուարԹուն» երեկոյեան աղօԹքի երկձայն երգովը պ. Սողիկեանի առաջնորդուԹեամբը։ Բայց սրանով չվերջացաւ նուագահանդէսը։ Լուսնեակ գիշերով կարգաւ երկնքի տակ սառի վերայ զուարԹ լապտերներով պէտք էր տեսնել աշակերտաց սահելը։ ԲազմուԹիւնը դուրս լեցուեցաւ, երբ լսեց այդ լուրը։ Սահելու հրաման տրուեցաւ Ե. և Զ. դասարաններու աշակերտաց և անոր բուրեգաննման սառի վրայ լապտերները ձեռքերնին սլանալ սկսան լուսնեակ երեկոյին։ Ուրիշ ոչ մի բան չէ կարելի մասերել այս տեսարանի առաջ, եԹէ ոչ երկինքի վրայ վառ ընկնող աստղերու սլացումը իրենց պայծառ հետքովը։ Փաղկրգեան համար այս ևս զարմանալի երևեցաւ. Նոյնց երկար. սահելը վերջացաւ և հաւաքուեցան կրկին դահլիճը։ Այստեղ էին այդ ծախլու, խօսելու, այն ինչ որ երաժշտուԹեան ժամանակին արգիլուած էին բոլորովին և սրան սիրով հրատակեցան հանդիսականները։ Թէյ մատակարարուեցաւ, կը ծառայէին առանձինը դպրոցի պաշտօնեաները, որպէս զի հանդիսականները բաւ ամենուցին գոհ մեկնեն։ Ժամի 10-ն էր, երբ նուագահանդէսը վերջացաւ բոլորովին և բոլորն էլ ուրախ և գոհ սրտանցուԹեամբ մեկնեցան վարժարանէն, յայտնելով միշտ զարմանք և օրհնելով մեծ հիմնադրի անունը և մաղԹելով նրան երկար օրեր։ Թէպէտ եղել են և ասողներ, որոնք անճաշակ, վարժուած արձանացներու … դանկուԹիւն են յայտնել, Թէ աւելի լաւ կը լինէր, որ մի էջ երգէին կամ մի չուլի եղանակ ածէին։

Այս էր ամսականի նուագահանդէսը, որ վերջացաւ մեծ յաջողուԹեամբ *)։

* * *

*) Նուագահանդէսի յայտագիրը ուղարկուած է մեզ, որից երևում է, որ նուագահանդէսի առաջին մասում ջուԹակի և դաշնամուրի վերայ առանձին առանձին և միասին գլխաւորապէս ածել են Բոնիցէտտիից, Հէնդէլից, Մենդէլ Մայսոնից, Լիդուշայից, Նեգրից, Հաուպտմանից, Հերման Շէօթէից, Վալդէնից, և այլն, ընդամենը 17 կտոր. իսկ երկրորդ բաժնում նոյն և մի քանի ուրիշ եւրոպական նշանաւոր կոմպոզիտորների գրածներից՝ նոյնպէս ջուԹակ և դաշնակ միասին և առանձին-առանձին՝ 17 կտոր։ Նուագահանդէսին մասնակցել են ջուԹակահարներ երեք խումբ բաժանուած, որոնցից 14 հոգի Զ. դասարանի աշակերտներից, իսկ 23 հոգի էլ Ե. դասարանից. դաշնակահարներ՝ 2 հոգի Զ. դաս. և 6 հոգի Ե. դասարանից։

Խմբ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՍՊԱՆԻԱ.—Իզաբէլլա Թագուհին, փոխանակ բաւ սովորուԹեան ձմեռն Սեվիլիայում անցկացնելու, յանկարծապէս Պարիզ է ուղևորում։ Այդ բանը բացատրւում է նրանով, որ սպանական կառավարուԹիւնը մի ինչ-որ քաղաքական խորդուանքի հետքեր է գտել, որոնք ծածկուած են Իզաբէլլա Թագուհու անուան տակ։ ԿառավարուԹիւնն արգիլել է ուղարկելու այն բոլոր հեռագիրներն, որոնք ուղղած կլինեն նախկին Թագուհու անուան՝ քանի նա դեռ երկրի սահմաններից չէ հեռացել, և առանձին, լիաչօր իրաւունքներով անձեր է ուղարկել հսկելու Իզաբէլլա Թագուհու հետեւից՝ մինչև նրա ֆրանսիական հողի վրայ հասնելը։ Ասում են, որ խարդաւանքը իսկապէս ոչ Թէ ինքը, Թագուհին է սարքել, հապա նա զէնք է դարձել քաղաքական մի բանի կուսակցուԹիւնների։

ԹԻՒՐՔԻԱ.—«Կ. Պոլսում, գրում է «Journ. des Débats»-ն, կայ գերմանական մի տարբեկուԹիւն, որ Թէև կառավարուԹեան վերայ նստում է կէս միլիոն, բայց դեռ ոչ մի օգուտ չէ տուել։ Բայց այժմ Բ. Դուռը կարիք է զգում ամեն մի նահանգի մօտ կարգել մի-մի գերմանացի փոխարքաներ, որոնց է յանձնուելու վարչական մասին ուղղուԹիւնը և նրա վերայ հսկելու։ Թիւրքական լրագիրները, ասում է յիշեալ Թերթի ԹղԹակիցը, աշխատում են Թուլացնելու ձեռք առնուած այս միջոցի նշանակուԹիւնը պնդելով, որ դրա նպատակն է անտառների և հանքերի լաւ արդիւնագործուԹիւնը Թիւրքիայի Եւրոպական և Ասիական նահանգներում և Թէ դա նախ պիտի գործադրուի միմիայն Պրուսայի վիլայէԹում։ Բայց ճշմարիտն այն է, որ փոխ-նահանգապետին տրուած իրաւունքն աւելի ընդարձակ պիտի լինի և երկրի հարստուԹիւններն մշակելով չպիտի սահմանափակուի։

—«Նոր-Դար»-ի ստացած հեռագիրներից արդէն ընԹերցողը գիտէ, որ Դամասկոսում մի ինչ-որ ձերբակալուԹեան համար սարքադրուԹիւններ էր ծագել։ Կ. Պոլսից ստացուած լուրերին նայելով, Դամասկոսի նահանգապետը յայտնել է, որ ձերբակալուած անձը մեղադրւում է 14 յանցագործուԹիւնների մէջ և Թէ ձերբակալուԹիւնը կատարուել է ոչ Թէ Ֆրանսիական հիւպատոսարանից դուրս։ Ֆրանսիական կառավարուԹիւնը, Բ. Դրան հետ միասին, որոշել է կազմել մի մասնաժողով, որ Թիւրքական կոմիսարի հետ որոշեն այն պայմաններն ու հանգամանքները, որոնց միջոցին ձերբակալուԹիւնը կատարուել է։ ՔննուԹիւնը պիտի շօշափէ և Սիրիայում իւրեւի ընդհանուր դրուԹեանը՝ նրան բարեկարգելու նպատակով, որոնց մասին Ֆրանսիան յաճախակի դժգոհուԹիւններ է յայտնել։ Ֆրանսիական կոմիսար նշանակուած է Էնիբրը՝ Կ. Պոլսի ֆրանսիական դեսպանատան խորհրդական։

ՀԱԲԵՇՍՏԱՆ.—Հռոմից հեռագրում են, որ նոյնպէս Մասսովայից ստացուած տեղեկուԹիւններին, այնտեղ լուր է տարածուած, Թէ Շոաի Թագաւոր Մենելիքն ապստամբել է Նեգուս Յովհաննէսի դէմ։

ԳԵՐՄԱՆԻԱ.—Սան Րէմօից հաղորդում են Թերթերին, որ յունվարի 17-ի երեկոյեան Մեքէնզի, Հաուէ, Կրաուզ, Շրադեր և Բրամանն բժիշկները հետազօտելով գերմանական Թագաժառանգի հիւանդուԹիւնը, որոշել են, որ անդամահատուԹիւն անելու կարիքուԹիւն չկայ և Թէ շնչառուԹիւնը բոլորովին կանոնաւոր է։

ԱՄԵՐԻԿԱ.—ՀասարակապետուԹեան նախագահի ընտրուԹեան ժամանակները մօտենալով, աւելի և աւելի կենդանուԹիւն է ընկնում երկրի մէջ։ Զննելով չրաները, զանազան կուսակցուԹիւններ ներկայացուցիչներն անդադար ման են գալիս մի քաղաքից միւսը՝ ամեն տեղ իրենց կանդիդատին պաշտպանելով։

—Միացեալ-Նահանգների կոնգրէսը յանձն պիտի դրագէ մարսային բարեփոխուԹիւններն մի նոր նախագիծ, որ առաջարկում է Կլիվլէնդը։ Այդ նախագծով բոլորովին ազատւում են մաքսից արտասահմանեան ապրանքները։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԻՑ.—«Schlesische Zeit.»-ը մի ընդարձակ յօդուածի մէջ դատողուԹիւններ է անում Ռուսիայի արևելեան քաղաքականուԹեան նպատակների մասին Բալկանեան Թերակղզում. Նա անհիմն է համարում նրա իբր Թէ յարձակողական միտումներն Աւստրիայի և Գերմանիայի վերաբերմամբ։ Նրա ասելով, Ռուսիայի 100 միլիոն բնակիչներից պէտք է Եւրոպայի քաղաքական ասպարէզի վերայ հաշուի առնել միայն 80 միլիոն։ Պէտք է ի նկատի առնենալ, որ Ռուսիայի համար մեծ ճիգն է հարկաւոր իւր բնակիչների $1^0/_0$-ը արտասահման ուղարկելու համար որպէս զինուած բանակ՝ յարձակողական նպատակներով։ Մինչդեռ Աւստրիա-Ունգարիան և Գերմանիան միասին ունին մօտ 90 միլիոն ժողովուրդ՝ կեդրոնացած համեմատաբար աւելի փոքր տարածուԹեան վերայ, որ միևնոյն ժամանակ և երկաԹուղային բազմուԹիւնով է ծածկուած։ Պաշտպանողական պատերազմի միջոցին Աւստրիա-Ունգարիան կարող է պատերազմի դաշտ հանել իւր 40 միլիոն ժողովրդից $3^0/_0$-ը, իսկ Գերմանիան իւր 50 միլիոն ժողովրդից $4^0/_0$-ը։ Այսպիսի դէպքում պարզ կերպով գործուԹիւնը երևում է Աւստրիա-Գերմանական դաշնակցուԹեան կողմը, որ անմիջական ազդեցուԹիւն պիտի ունենայ Պետերբուրգի կաբինէի վերայ՝ Թէև Գերմանիան սովորած լինէր միւս կողմից էլ պատերազմել Ֆրանսիայի հետ։ Այսպիսի դէպքում Գերմանիայի դաշնակցուԹիւնը անգնահատելի է Հռոմայեան կայսրուԹեան համար, մինչև անգամ եԹէ Գերմանիան անտարբեր դատուելու էլ լինէր արևելեան խնդրի վերաբերմամբ։

ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ.—Սոֆիայի առանձնուԹեան միջոցին Ֆիլիպպոպոլսում, Ստամբուլովը խօսում է մի ճառ, որի մէջ յայտնել է յայտնում, որ կը հրապարակի բուլղարական անկախուԹիւնը։

—«Berl. Tagebl.»-ին հեռագրում են, որ Կ. Պոլսից ստացուած լուրերին նայելով, Ռուսիայի ազդեցուԹիւնը Եըլդըզ-քէօշում վերջի ժամանակներս քանի գնում ընկնում է։ Ռուսական դեսպան Նելիդովը ամեն ջանք գործ էր դնում Բ. Դրան համոզելու, որ սրբից Ֆերդինանդին Բուլղարիայի իշխան չճանաչէ, բայց Թիւրքական մինիստրները պատասխանում էին նրան, մատնացոյց անելով բուլղարական խնդրի ունեցած միջազգային նշանակուԹիւնը, որի պատճառաւ էլ սուլԹանի կառավարուԹիւնը ոչ մի քայլ կարող չէ անել առանց բոլոր պետուԹիւնների խորհրդին։

—Թիւրքիայի վերջերս բռնած դիրքը դէպի բուլղարական կառավարիչները խիստ մեծ բարեկամական ձև ունի։ Կ. Պոլսում եղող բոլոր չերնոգորցիները, որոնք իրենց վերայ շարժել են Թիւրքական վարչուԹիւնների կասկածանքը, ձերբակալուեցան։ Թիւրքական փաշաները Ադրիանուպոլսում երևան հանեցին բուլղարական ապստամբների հետ կապ ունեցող մի ամբողջ գաղտնի ընկերուԹիւն։ Բուլղարի անձնլ ապստամբուԹեան մասնակցողների դատը խիստ մեծ խստուԹեամբ է կատարւում։ «Շատ կարելի է, ասում է «Berl. Tagebl.»-ի ԹղԹակիցը, որ այս բոլոր հանգամանքները Ռուսիային կը ստիպեն իւր բռնած դիրքից դուրս գալ և Բ. Դրան ըղձալ տալ, Թէ ամեն բան անպատիժ կարող չէ անցնել»։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Աւստրիական Թագուհին որպէս ձիաւոր.— Աւստրիական Թագուհին նշանաւոր է և որպէս ամենալաւ ձի նստողներից մին։ Գրաֆ ՀէլֆէլԹը ունէր մի զարմանալի՝ բայց և անպիտան ձի՝ «Փոննէրկէյլ» անունով, որ կարճ ժամանակամիջոցում անդամախեղեց և կծոտեց 11 ձիապանների և, վերջապէս, կծեց և գրաֆի մատը։ Այդ բանի վերայ գրաֆը խոկոն հրամայեց, որ անմիջապէս ծախեն նրան։ Աւստրիական կայսրուհին գնեց «Փոննէրկէյլ»-ին և զսպելով այդ ձիուն այնպէս խաղաղացրեց նրան, որ ձին նրա ձեռքից շաքար է առնում և ուտում։

*** «Times»-ին Պեկինից հաղորդում են, որ Դեղին գետի վերջի հեղեղման միջոցին խեղդուած անձերի Թիւը մինչև եօԹ միլիոնի է հասել։

*** Ներկայ 1888 Թուին Ռուսիայում պիտի տօնուին մի շարք շատ տեսակ յոբելեաններ։ Բացի արտաքին գործերի մինիստր Ն. Կ. Գիրսի (սեպտեմբերի 13-ին) և ժողովրդական կրԹուԹեան մինիստր Ի. Դ. Դելեանովի (4 նոյեմբերի), պետական խորհրդի անդամ Ա. Գ. Դրենտէլնի և Ն. Վ. Իսակովի և գիտուԹեան ճեմարանի քարտուղար Կ. Վ. Վեսելովսկու յիսնամեակներից, պիտի տօնուին նոյնպէս և ուրիշ 22 գեներալ-լէյտենանտների յիսնամեայ յոբելեանները։

*** Լոնդոնում կազմուել է մի ընկերուԹիւն 120 հազար ֆունտ ստերլինգ դրամագլխով, որ պիտի արագացնէ ԹղԹից շիշեր պատրաստելով։ Ասում են, այսպիսի շիշերը խիստ յարմարուԹիւններ ունին հնասար … հեղուկներ կրելու։

*** Իտալական «Unione Lomberda per la Pace e l'Arbitrato Internazionale» ընկերուԹիւնը 1000 լիրա մրցանակ նշանակել է «Որոնք են պատերազմի պատճառներն և ինչպէս կարող են դրանք ոչնչանալ» խնդրի վերայ լաւ շարադրուԹեան համար։

*** Դիւսէլդորֆում մին Փօստայ պաշտօնեայ է իւր երկու անգամ ապահովագրուած տուած կեանքի վերայ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի
ՀԻՄՆԱԿԱՆ ԹՂԹԱԿԱՑՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 Յունվարի.— Ներքին գործերի մինիստրը ոլոշեց կրկին թոյլատրել «Сынъ Отечества» և «Минута» թերթերի հատով վաճառումը, որ արգիլուած էին 1887 թ. սեպտեմբերի 30-ին:

Ձմեռային պալատում երէկ բալ կար, ուր ներկայ էին 700 հրաւիրուածներ:

Լրագիրների ստացած տեղեկութիւններին նայելով, նեռկլադնոյ տուրքերի դեպարտամէնտում յունվարի 30-ին կազմուելու է առանձին յանձնաժողով, արտահանուող սպիրտի վաճառականութեան ծաղկելու հարցը քննելու համար:

«Нов. Вр.»-ի ասելով, պետական կալուածների մինիստրութեան մէջ քննվում է Բաթումի շրջանում ռուսներ ընակեցնելու խնդիրը: Յիշեալ շրջանի միացման օրից այնտեղ կազմուել են մի քանի ռուսական գիւղեր, և ներկայումս շրջանի կառավարչին տրուած են 1000-ի մօտ խնդիրներ՝ իրենց հող տալու մասին, որից տեղական վարչութիւնը կարող է գոհացնել 500 խնդիրներին, միևնոյն ժամանակ ամեն մինին հաշուելով 2-6 դեսեատին:

Լրագիրները հաղորդում են, որ հողային բանկերի ակցիոնէրները Ֆինանսների մինիստրութեան դիմել են խնդրելով, որ այդ բանկերի արժեթղթերի (նակլանդոյ լիստ) դները, սլեատկոն կոպոլների համար գրաւ առնելու միջոցին, հաւասարուին հողային փոխադարձ վարկի ընկերութեան և քաղ. վարկի ընկերութիւնների նոյնպէս թղթերի հետ: Լրագիրներն աւելացնում են, որ արժեթղթերի (զակլադնոյ լիստ) դները մինչև այժմ աւելի ցած են եղել այն թղթերից, որոնց հրատարակող հիմնարկութիւններից փոխադարձ պատասխանատուութիւն են ունեցել:

Աւստրիա-գերմանական դաշնագրի հրատարակութիւնը բազմաթիւ դատողութիւնների առիթ դարձաւ արտաահմանեան թերթերի համար: Բերլինի և Վեննայի թերթերը այդ հրատարակութեան մէջ տեսնում են խաղաղ ցոյց. Ֆրանսիական թերթերից «Débats»-ն դաշնագրի հրատարակութիւնը աւելի յուզման մասին թնդանօթի առաջին պայթումն է համարում, քան թէ խաղաղութեան լուր. «Temps»-ը հարցնում է, արդեօք Աւստրիան պատերազմի առիթ կը համարէ, եթէ Ռուսիան խառնուի բօլղարական գործերին. «Paris»-ն այդ հրատարակութիւնը համարում է Բիսմարկի վարմունքի մի ձևը՝ զինուորական վարկի 200 միլիօնը ստանալու համար:

ԽԱՐԿՈՎ.—Այսօր դասախօսութիւնները սկսուեցան համալսարանում:

ՄԵՐՎ.—Մեշչեգի անգլիական զինուորական գործակալ գնդապետ Մակելանի հսկողութեամբ, Էլբխանն այս օրերս ուղարկուեց Հընդկաստան: Փողի պակասութիւնից և անապատում մոլորուելուց, Էլբխանը ստիպուել է անձնատուր լինելու անգլիացիներին, որոնք նրա համար նշանակել են ցմահ՝ բաւական նշանաւոր ռոճիկ:

ԲԵՐԼԻՆ,—26 Յունվարի. Բայխստագում այսօր կատարուեց փոխառութեան օրինագծի առաջին ընթերցումը: Նիստում իշ. Բիսմարկն ասաց ի միջի այլոց „Ես խօսում եմ, որպէս զի կարծիքս յայտնեմ Եւրոպայի ընդհանուր գրութեան մասին. մի տարի առաջ մենք երկիւղ էինք կրում Ֆրանսիայի հետ պատերազմելուց, բայց նրանից յետոյ Ֆրանսիայում երևան եկաւ խաղաղասիրական ուղղութիւն: Ես կարող եմ խաղաղացնել հասարակական կարծիքը. միտումներն Ֆրանսիայի վերաբերմամբ խաղաղասիրական են. մենք երկիւղ չունինք Ռուսիայի կողմից էլ յարձակման ենթարկուելու. Ալէքսանդր Կայսրի խօսքին ես անպայման հաւատում եմ: Ռուսական զօրքերի կեդրոնացումը սահմանի վերայ կարող է երկիւղալի երևալ, բայց ոչ մի տուիթ չեմ տեսնում ռուսական կամ եւրոպական պատերազմի: Ռուսիան շահ չունի պրուսական կամ աւստրիական գաւառներն տիրելու. դեռ Ֆրանսիայի հետ պատերազմն էլ չէր դրդիլ ռուսիային՝ պատերազմ յայտնելու: Ընայելով փոխադրիկ ծագելու բոլոր նշաններին, երեք կայսրների մօտիկ յարաբերութիւնների շնորհիւ, յայտնի խաղաղութիւնը տիրապետեց: Սակայն հարկաւոր է աւելացնել մեր ոյժը՝ մեր արժանապատուութիւնն ու կալուածները պահպանելու համար: Դրա համար ոչ մի գոհ չէ կարող խիստ ծանր համարուել: Ֆրանսիայի և Ռուսիայի շարժումները մեզ ստիպում են պաշտպանուիլ. մենք որ և իցէ ազգից աւելի աջողութեամբ կը կարողանանք մեր հակառակորդներին զօրաւոր ընդդիմութիւն ցոյց տալ: Պրուսիան միշտ աշխատել է լաւ յարաբերութիւններ պահպանել Ռուսիայի հետ և ես միշտ սիրով աշխատել եմ, այդ յարաբերութիւնները զարգացնելու մասին: Բայց, ասկայն, Ռուսիան սառեց: Ես այս ասում եմ, որպէս զի հասկանալի լինի, թէ ինչի մենք դաշն կապեցինք Աւստրիայի հետ: Ես չէի կարող Աւստրիային հեռացնել մեզանից, և եթէ ես այդ անէի, մենք առանձնացած կլինէինք Եւրոպայի մէջ և անպայման կերպով կախուած կլինէինք Ռուսիայից: Դաշնագրի հրատարակութիւնը ամենք սպառնալիք են համարում. բայց այդ դաշնագիրը երկու դաշնակից կողմերի շահերի միաւորակութեան արտայայտիչն է: Իտալիայի հետ մեր դաշնագրութիւնը լոկ արտայայտութիւն է ընդհանուր շահերի և ձգտումն ընդհանուր վտանգն հեռացնելով միասին խաղաղութեան պահպանութեանն հետևելիս: Աւստրիան մեր բնական դաշնակիցն է Ռուսիայի և Ֆրանսիայի կողմից սպառնացող վտանգների ժամանակ: Ռուսիայի ատելութիւնից վախենալու հարկ չկայ. ատելութեան պատճառով պատերազմ չեն անում: Մեր ունեցած զօրութիւնը կը խաղաղացնէ հասարակութեան մտքերը. ուժեղացնել այդ զօրութիւնն՝ ահա իմ նպատակս: Ներկայացրած օրինագծերի զօրութեամբ, մենք կարող կլինենք մեր ամենամի սահմանի վերայ կանգնեցնել մի-մի միլիոն լաւ զինուորներ, իսկ նրանց ետևից կանգնած կլինին մեր պահեստի զօրքերը: Մեր սպաների կօրպուսն այնպէս է, որպիսին ոչ մի պետութիւն չունի: Եթէ մենք պատերազմ սկսենք, դա պէտք է ազգային պատերազմ լինի: Ոչ մեր ոյժի գիտակցութիւնը և ոչ էլ մեր գիտակցութիւնը յաղթութեան յոյսերի մասին չեն հեռացնիլ մեզ մեր նախկին խաղաղական ձգտումներից և ես յոյս ունիմ, որ մենք խաղաղութեամբ կապրինք մեր հարևանների, մանաւանդ Ռուսիայի հետ: Բօլղարիայի վերաբերմամբ մենք բոլորովին հեռաւորական ենք եղել և հենց որ Ռուսիան պահանջէր մեզանից, ոչ մենք պահպանէինք սուլթանի առաջ Բօլգարիայի վերաբերմամբ նրա՝ Բերլինի դաշնագրութեան վերայ հիմնուած միտումներն, ես չէի տատանուիլ կատարելու»:

Խմբագիր-Հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՕՖԷ ՄՕԿԿՕ
Ս. ՍԻՈՒ ԵՒ ԸՆԿ.
(M.) 50—14

ԴՕԿ. ՊՕՊՊԻ Անատէրենան բերան ողողելու հեղուկն, որ պահպանում է ատամն առողջ և գեղեցիկ. միևնոյն ժամանակ գործ դնելով ատամնապին փոշին:
ԴՕԿ. ՊՕՊՊԻ Բուսական օճառը կաչալի ամեն տեսակ հիւանդութիւնների և լուացուելու համար չատ լաւ է:
Կարելի է ստանալ Ռուսիայի և արտասահմանի բոլոր հռչակաւոր նիւթերի, գեղատնային և գալանտէրեան ապրանքների վաճառանոցներում: Դեպօն՝ Թիֆլիսում, Գեղատնային ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան՝ և Բագում նրա բաժանման մէջ, Պօպով և Լանկո.
(M.) 25—4

Լոյս կը տեսնի 1888-ին առանձին գրքով
Գ. ՁՈՒԲԱ Ի
ԲԱՐԵԳՈՐԾՆԵՐ
ՄԱՀՏԵՍԻ ՍԱՐԳԻՍ
ՄԻՎԱՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՓՇՐՈՒԱԾ ԿԵԱՆՔ
երկերը միասին: Բաժանորդագինը 1 ռուբլի է ընդամենը: Բաժանորդ գրուել կարելի է միմիայն «Նոր-Դար»-ի խմբագրատանը: Օտար քաղաքներից դիմում են «Նոր-Դար»-ի խմբագրութեանը այսպէս. Тифлисъ, въ редакцію ежедневной армянской газеты «Норъ-Даръ».
(Խմ.) X—18

1865 թ. 1882 թ.
ՍԱՎՎԱ ՄՕՐՕՁՕՎԻ ՈՐԴԻ ԵՒ ԸՆԿ.
ՆԻԿՕԼԵԱՆ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԸՆԿԵՌՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
Պատիւ ունի պատ. գնողներին տեղեկացնելու, որ 1888 թուի յունվարի 1-ից իւր վաճառականական պահեստը ԲԱԳՈՒ քաղաքում պիտի գտնուի ԿՐԱՍԻԼՆԻԿՕՎԻ տանը, Ծովափին (Նաբերէժնայա), ուր և խնդրվում է դիմել Ընկերութեան ապրանքների պահանջներով:
6—5

Կ. ԿԱՆԴԻՏԵՐ
Կ. Ս. ՍԱՓԱՅԵԱՆՑ
Սօղլակի փողոց, տուն Թաշիրովի.
ՊԱՏՐԱՍՏԻ գտնվում է ինձ մօտ, ամեն օր, շատ լաւ եղանակ, պիրսօվկի, պօնչիկ, շօկոլադ, զոլֆա, թէյ, կաթ, սեր, սլիվկա, լիմոնադ, գեղաբերան ջուր, խմորեղէններից՝ պրեանիկներ, կուլիչներ, պիրսմանի, պեչենի, քաղցրեղէն, վարենի, մարմելատ, տարթ, Ժարմ կոնֆեկտներ՝ ամեն տեսակի և չափաւոր գներով:
ԸՆԴՈՒՆԵՈՒՄ ԵՄ ամեն տեսակ պատուէրներ:
(տ.) 10—6

ՆԵՐԿԱՅ 1888 ԹՈՒԻՆ
Հրատարակվում է Կ. Փալատ
„ԲՈՒՐԱՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ“
Պատկերազարդ հանդէս, որ լոյս է տեսնում ամիսը ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ, Բաժանորդագինն է ՉՈՐՍ ՐՈՒԲԼԻ: Բաժանորդ գրուողների վերայ վճռակ պիտի դրուի 40 բաժին նուէրներ (40 հատոր գիրք):
Ռուսիայում բաժանորդ կարող են գրուել նաև ԱՐՇԱԿ ՄԵՂՐԱԲԵԱՆԻ մօտ, որի հասցէն է, Въ Шулаверы (черезъ Бѣлый Ключъ) Аршаку Меграбянъ.
ՏԷՐ-ՏՆՕՐԷՆ ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ
(փախ.) 5—5

ԴՕԿՏՕՐ ԼԷՆԳԻԼԻ
ԿԵՁՈՒ ԲԱԼԱՍԱՆ
Մէջ որուայի գինն է 1 ր. 65 կոպէկ.
ԴՕԿՏՕՐ ԼԷՆԳԻԼԻ ՕՊՊՈ ՊՕՄԱԴ ո և է Կօլդ Կրեմից լաւ է մի ամանը 1 ռուբլի.
ԴՕԿՏՕՐ ԼԷՆԳԻԼԻ ԲՕՆԶԵԱՆ ՕՃԱՌ 1/2 կտորը 50 կ., 1/4 կտորը 35 կ.
Ուղարկելու ծախսը առանձին է հաշվում: Վաճառվում է Ռուսիայի բոլոր դեղավաճառանոցներում և դեղատներում: Գլխաւոր պահեստը բոլոր Ռուսիայի համար է Վ. ԱՈՒՐԻԻԻ մօտ, Պետերբուրգում, Սարէմեանայա, 4.
ԹԻՖԼԻՍՈՒՄ.—Դեղատնային ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութիւն, և Գրիվոյի մօտ:
46—6

ԿՕՆԴԻՏԵՐԻԱ ԵՒ ՀԱՑԱԳՈՐԾԱՐԱՆ
ՊԵՏՐՈՍ ԻՒԶԲԱՇԵԱՆԻ
Երևանեան հրապարակի վերայ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
Պատրաստի ունի ամեն օր նոր և թարմ ԿՕՆՖԻԿՏՆԵՐ ԼԷ ՀՐԳԵՐԷՆ ԷՔ ԼԷ Հոպնի ու պօմպէյա էլոշուած պեսաչներից ԿԱՐԱՄԱՆԴԱԿ, ՇԱՔԱՐԱՀԱՑ, ՅՈՒՂԱՏ, ՏՕՐՏ և ՔԱՂՑՐԱԼԻՆԻՔ ամեն պեսաչի:
Նոյնպէս բազմատեսակ և բազմաձև ՀԱՑԵՐ ԵՒ ՊԱՔԱՍԻՄԱՔ.
ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ
ԲՕՆԲՕՆԵՕՐ ԱՐԿՂԻԿՆԵՐ
ՓԱՌԱՇԷՆ ԵՒ ԶԱՐԴԱՐՈՒՆ
Ընդունում է պատուէրներ թէ Թիֆլիսում և թէ գաւառական քաղաքներից ամենաչափաւոր գներով և կատարում է նրանց ԱՐԱԳ ԵՒ ՃՇԳՈՒԹԵԱՄԲ:
Այն օտարքաղաքացիների համար, որոնք ՇԾ ֆանախուլիէամբ են պատուիրում, լինում է նշանաւոր զիջում:
Հասցէն՝ Тифлисъ, кондитерская П. Юзбашева.
50—10

Дозволено цензурою. Тифлисъ 26-го Января 1888 г. Տպարան Ա. Գ. Թոփչեանցի Типографія М. Д. Ротшейнъ. Гол. пр. д № 41.